

Բայց որովհետեւ Դաւադանոս վճռած էր «վրէժ լուծել քրիստոնեաներու արիւնին»⁴⁹ եւ մեծ ջանքով վերելք քրիստոնեայ Բիւզանդիոնի պատիւը, իր բանակով դնաց յարձակեցաւ մուսուլմաններու իշխանութեան տակ գտնուող Ամիտ քաղաքին վրայ, ետեւէն քաշելով նաեւ Նորմանդացի Հերվէնը: Հանդամանքները նպաստաւոր էին, վասն զի քաղաքին ամիրան, Սայիտադ-Դաուլան քաղաքին բնակիչներէն թունաւորուած էր⁵⁰:

Երբ քաղաքացիները լսեցին հռոմէներու գալուստը, նենգաւոր խորհուրդ մը յղացան. անոնք վարձկան Հերվէին տասը հազար դահեկան զաւառի տալով՝ սէր եւ միութիւն հաստատեցին անոր հետ: Դաւադանոսին ականջին հասնելով կաշառքին լուրը, նախատեց կաշառառուն, եւ երբ կայսերական երկու բանակները հասան Ամիտ քաղաքին դրան առջեւ, ճիշտ այնտեղ՝ որ «Հոռոմ դուռ» կը կոչուէր, այլազգիներու զինուորները պատերազմի ելան: Կաշառակիր «Փրանգոպոլը» նոյն օրուան պատերազմի դործողութիւնները նենգութեամբ Դաւադանոսին յանձնեց, իսկ ինքը իր հետեւակ եւ ձիաւոր զինուորներով պատերազմէն ետ քաշուեցաւ:

Դաւադանոս փոխ-վրէժի զգացումով ոգեւորուած, «գոչեաց որպէս զառիւծ ի վերայ Տաճկաց, կ'ըսէ Մ. Ուռհայեցին, եւ յարձակեցաւ ի պատերազմ»: Չէնքերու խառնուրդին ժամանակ, այլազգիներու բանակէն քաջ մարդ մը, Հեծն-Պշաւայ կոչուած, հոռոմ զինուորներուն մեծ կոտորած տալով, կրկնակի հարուածներով պատուեց Դաւադանոսի բանակին ճակատը, բայց երբ մօտեցաւ Դաւադանոսին, ասիկա «առիւծի պէս վրան յարձակեցաւ եւ նիզակով խոցելով անոր սիրտը, պատուեց լայն պահպանող զրահը եւ գեղարդը միւս կողմէ դուրս ելաւ, որով,

երկուքն ալ ձիերէն վար ինկան. ապա յարձակելով իրարու վրայ, տեղն ու տեղը սպաննուեցաւ Դաւադանոսը, իսկ Պշաւայն սատկած մնաց նիզակով»⁵¹:

Երբ լուրը տարածուեցաւ թէ քաջ Դաւադանոս մեռած է, անոր զինուորներէն մէկը Տավար անունով, դնաց «Փրանգոպոլին» մօտ եւ զայն իր զօրավարին մահուան պատճառ բռնեց: Կ'երեւի թէ զիւցազն Դաւադանոսին մահը Հերվէի խղճմտանքը խոցելով, անոր մահուան վրէժը առաւ՝ յարձակելով այլազգիներու վրայ, քաղաքին դրան առջեւ կոտորելով անոնցմէ տասնեւհինգ հազար հոգի⁵²:

Գրեթէ այդ ժամանակ, յանդուգն հայ մը, Յեհնուկ անունով, ուղեց իր արիւնակիցներու օգնութեան ձեռք տալ: Նա հինգ հազար կուսակիցներով դնաց Ամիտ գաւառը, Քիւրտերու ձեռքէն խլելու համար հայոց հօտերը, կողոպտող Թուրքերէն դնուած. բախումը տեղի ունեցաւ ձեպու-Շահար կոչուած տեղը, ուր հայազգի ասպատակողը, յաջողեցաւ խլել անոնց ձեռքէն ոչխարներու բազմաթիւ հօտեր, զանազան աւարներ եւ գերիներ եւ բերաւ հասցուց զանոնք Սեւերակ բերդը, Կարկառի հարաւ արեւելեան կողմը: Այս տեղը վրայ հասաւ Խալիտ Քիւրտ Շեյխը, իր ուղիներով բանակի մը գլուխը անցած: Յեհնուկ, բազմութենէ չըրջապատուած՝ յաղթուեցաւ, իր խումբը ցրուեցաւ: Քիւրտերը անկէ առնուած աւարն ու գերիները կրկին յափշտակելով՝ դարձան Ամիտ⁵³:

Սակայն Հերվէին շարունակած փոխ-վրէժի պատերազմը յաջողութեամբ պըսակուեցաւ: Իր բանակով Ամիտէն դէպի Կարին գացած ժամանակ, ճամբուն վրայ հանդիպեցաւ Թուրք բանակին, Թըլ-խումի թրքական ջոկատներուն, որոնք՝ ինչպէս տեսանք, այդ հարուստ գաւա-

ռը ջարդեր ու կողոպտեր էին: Անիկա պատերազմեցաւ անոնց հետ, յաղթեց, շատերը կոտորեց, սպաննեց անոնց ամիրան, որ Ուսուի կը կոչուէր, անոնց ձեռքէն առաւ աւարը եւ ազատեց գերիներու մեծ բազմութիւն մը⁵⁴:

Սակայն Հերվէն չկրցաւ երկայն ատեն իր յաղթութեան դափնիներուն վրայ հանգչիլ, վասնզի քաջ եւ անկեղծօրէն քրիստոնսասէր Դաւադանոսի մահուան

լուրը հասեր էր Կոստանդին Դուկասին եւ խորապէս տխրեցուցած զայն: Կայսրը տեղեկանալով որ այդ դիւցազին մահուան պատասխանատուն էր «Փրանգոպոլ»ին նենգութիւնը, կ'ըսէ Ուռհայեցին, կանչեց զայն Կ. Պոլիս եւ քար մը կապել տալով՝ պարանոցին՝ նետել տուաւ ծովը⁵⁵:

(Շարունակելի)

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

53 Հմմտ. Մ. Ուռհ. Բ. 173:

54 Հմմտ. Մ. Ուռհ. Անդ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1962, ք. 3-5, էջ 53)

ԳԼՈՒԽ Ը.

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԸ ԺԶ.-ԺԸ. ԴԱՐԵՐՈՒՆ

Վերջին շրջանն է ասիկա Աղօթամատոյցին զարգացման, որու քննութեան աղբիւր ունինք «Խրատք ժամատեղոյ կարգաւորութեան», յօրինուած ժԶ. դարուն, նախորդ խրատներուն վրայ եւ ընդարձակմամբ: Ունի անոնցմէ կրկնութիւններ՝ որ մեզ չեն հետաքրքրեր, եւ նորութիւններ՝ զորս ուշադրութեան պիտի առնենք: Նոյնպէս «Գիրք մեկնութեան», քանի մը ժամագրքեր, Թումա եւ Առաքել Դաւրիթեցի պատմիչը:

1. Գիշերային. — Հարկ է առանձին նկատել յիշեալ Խրատքը, որ իր տարբերութիւններն ունի ժամագրքէն, եւ կը զանազանէ զիշերային պաշտամունքի մասերը լուր եւ տօնական օրերու միջեւ:

Առաջին պարագային՝ Զարթուցեալ քարոզին սկիզբը կը գնէ եւ եւս խաղաղութեամբ, եւ Օրհնեա տէր՝ նախ քան Զֆէն գոհամալք, որ աներեւոյթ են ժամագրք-քերու մէջ: Իսկ տէրունական տօներուն կը գրէ, «Տէր եթէ շրբումքն (խմացիր, Տէր զի քաղումքն ալ) ի ձայն ասէ փոխ առ փոխ: ... Ապա եթէ փոխ առ փոխ ոչ կամիցին ասել, ի միասին տօնացեն՝ յատեան ելանելով, զի փոխ առ փոխ ի դասն ասի», մին Մաքենեաց եւ միւսը Սեպուհոյ ոճով:

Տէր, զի՞ քաղումքն ըսելու կերպին մէջ տարբերութիւն կայ հօս հինէն, որ թիւ էր: Տաթեւացին կը գրէր թէ «համաձայն երգեմք», իսկ «Գիրք մեկնութեան» կը զանազանէ «Կիւրակէից աւուրքն ի միասին ձայնիւ ասեմք, եւ յայլ աւուրսն ի թիւ», եւ թէ «երկու երկու տուն մի շունչ ասի» (14). Ինչ որ Տաթեւացին ալ ըսաւ արդէն: «Խրատ. ԺԶԿ.

49 Մ. Ուռհ. Անդ:

50 Մ. Ուռհ. Անդ:

51 Մ. Ուռհ. Բ. 172:

52 Հմմտ. Մ. Ուռհ. անդ:

կարգաւ» կը յարէ՝ թէ «յետի փոխն՝ Տէր լուր աղօթիցն՝ բարձր ասի քան զայլ փոխերն»:

Սաղմոսականոնները կը բաժնէ այսպէս. չորս կանոն դիւերը, մէկ՝ «յառաւոտու», եւ երեք՝ ճաշու երեք ժամերուն: «Յառաւոտու՝ կ'իմանայ Արեւադալը, ըսելով թէ՝ «նախնեաց կարգեալ եւ որ առաւօտու կանոնն յառաջագոյն ասի»:

Կանոններու իր բաժանումը նոյն է նախորդին հետ. երկու՝ դիւերի, երկու՝ առաւօտեան, եւ մի՝ արեւադալի: Կ'երեւի թէ սաղմոսականոններու զանցառուններու հետ կային միշտ աւանդութեան փարոզներ եւս, ինչպէս այս իրաւունքուն խմբագրիչն էր: Եւ յետ իւրաքանչիւր գուրդայի կը դնէ մասեր՝ որ նմանութիւն է խորովու յիշածին: «Ալէլուիա, ալէլուիա: Եւ եւս խաղաղութան, Կեցո (կեցուցէ եւ ողորմեսցի): Օրհնեա, տէր, այս անուն: Եւ նա ասէ. Օրհնութիւն եւ փառք... (առանց ամէնին): Խաղաղութիւն ամենեցուն»:

Եւ սաղմոսողն «Ամէն», որուն կը յաջորդէ միւս գուրդան:

«Իսկ առաւօտու (արեւադալի) կանոնն առանց Ալէլուիայի է. ճաշու սաղմոսն ալ Ալէլուով է երկու կանոնն, (թերեւս յարակից մասերով հանդերձ): Իսկ երեկոյեան կանոնն առանց ալէլուի է: Եթէ կաթողիկոսը ներկայ է, — ուր որ անկ է — «Օրհնեա, տէր»:

Եպիսկոպոսին՝ նոյնպէս. վարդապետին՝ «Օրհնեա, վարդապետ», պատուաւոր քահանայից՝ «Օրհնեա, այս անուն»:

Այս շրջանին Օրհնեա տէրը շատ բազմացած է, թէ՛ ժամերգութեան եւ թէ պատարագի մէջ: Կը մօտենայ Տաթեւացիի ակնարկած տեղերուն սովորութեան:

Օրուան ձայնին համեմատ սաղմոսականոնները կը դասաւորէ այսպէս: Երանեալն «առաջին ձայնին» է, որուն կը յաջորդեն Գ2 Իբրեւ գի եւ ուրիշ երկուք, հաւանօրէն Ա4 երկինգ եւ Գ4 Տէր ապաւնէ: Երկրորդ օրն առաջին կանոնն կը լինի Ա4 երկինգ պատմեն, Գ4 Տէր ապա-

ւնի հետ. եւ հաւանօրէն Բ2 Մի՛ նախանձիր եւ Դ2 ի հետ, եւ այսպէս յաջորդաբար:

Յետ օրհնութեան կամ «յաւարտ շաբաթանին կից» կը դնէ «Տէր ողորմեա. կեցո տէր: Վասն գտանելոյ», զանց ընելով մաղթանքը: Իսկ «յորժամ պատարագ ոչ լինի, յետ աւրհնութեան շաբաթանին՝ քարոզ ոչ ասի»:

Որ է վերջին մեծ քարոզը, այլ աւագ երկցու դասէն՝ Եւ եւս խաղաղութեան. Կեց. (կեցո տէր): Օրհնեա տէր: Օրհնութիւն եւ փառք օրհ, եւն.: Նաեւ յետ պահոց օրհնութեան քաղուածին կը դնէ «Եւ եւս խաղաղութեան. Արհնութիւն եւ փառք»: Բայց անսովոր է մեծ քարոզին եւ աղօթքին զեղչումը այդ օրեր, որոն հետքը չենք գտներ այլուր:

Ալէլուիա ըստ կամս կը կրկնուէր եւ կամ մէկ անգամ կ'երգուէր: Դարձեալ «Օրհնեա տէր այս անուն», որուն կը յաջորդէր վերջին մաղթանքը՝ Սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ այլն. որոնց ձայները տակաւին անփոփոխ կը մնան՝ ինչպէս էին. այսինքն «առաջին եւ Գ2ին՝ Սաղմոսիւք եւ օրհնութեամբ. Իսկ առջի կողմին եւ Գ4ին Ի գիշերի եւ Ի տուրնցեան, եւ երկրորդ ձայնին եւ Դ2ին՝ Երգս օրհնութեան. Իսկ աւագ կողմին եւ Դ4ին՝ Գոհութեամբ եւ ունարիտ», ինչպէս ունի տակաւին 1634ի օրինակն ալ: Ատոր հակառակն ալ կայ այժմ, ինչպէս կը զգացնէ իրատեքը, որ նոյնպէս տարբեր է ներկայէս. «Այլ այժմ մեք եւ բազումք նոյնպէս յորժամ Ա2 եւ Գ2 լինի՝ ասեմք. Գոհութեամբ եւ ունարիտ: Եւ յորժամ Ա4 եւ Գ4 լինի՝ ասեմք. Սաղմոսիւք եւ օրհնութեամբ: Եւ յորժամ Բ2 եւ Դ2 լինի՝ ասեմք. Ի գիշերի եւ Ի տուրնցեան: Եւ յորժամ Բ4 եւ Դ4 լինի՝ ասեմք. Երգս օրհնութեան»: Մեր չորս տաղեր ժամադրեալ քարոզ, աղօթք ու մաղթանք կը յիշեն կանոններու անուամբ, ոչ ձայններով:

Հոս դարձեալ կ'ըսուէր ըստ իրատեքին՝ «Օրհնեա տէր այս անուն». քահանան՝

«Օրհնեալ տէրն մեր»:

Իսկ «Հայր մեր որ յերկինսդ ես՝ ասի առ հասարակ» կամ բոլորին կողմէ, կրկնուած նաեւ միւս ժամերուն վերջը:

Ընթերցումները կը յարատեւեն այս շրջանին. «Գիշերգիրքն գրեալ լինի (գրաւալին վրայ), եւ պատուորքն (պատուաւորքն) կարդան (եթէ կան), կամ աւագերէցն. Իսկ կիրակէին եւ պահոց՝ որ տօնք ոչ լինին, եւ դիրք յԱյսմաւուրաց կարդացեալ լինի» նաեւ այդ օրերուն: Եւ յետ ընթերցման կը դնէ երեք շաբաթան զոր յիշեցինք: «Գիրք մեկնութեան» նոյնը կը հաստատէ՝ թէ յետ Թաղաւորին «ընթեռնումք զյիշատակութիւն սրբոց» (18): ԾԲ. ժամագիրքը յետ վերջին մաղթանքին կը յարէ. «Եւ ընթեռնուն զԱյսմաւուրքն, եւ ասեն զՀայր մեր որ յերկինսն»:

Խրատքը կրկնած է հոս առաւօտեան «Քրիստոս Աստուած, վասն խաչի քո պատուականի մաղթանքը (այդ Քրիստոս Աստուած յաւելուածով), եւ յետոյ սուրբ Բեգնաւորոք, Պապիկ սրբոց կամ Զոր ընտրեցեք, զորս ունի նաեւ առաւօտեան պաշտամունքին վերջը ըստ սովորականին, եւ կ'աւարտէ Հայր մերով: Գիշերի այդ կրկնութիւնը այլուր անծանօթ է:

2. Քաղուածոյ շարակաւներ. — Գիշերային ժամէն հետագած՝ խօսինք օրհնութեան քաղուածոյ շաբաթաններու մասին, որոնց ակնարկեցինք վերեւ: Անցանք նախապէս գիշերի պաշտամունքէն եւ Հսկման տասը թուով երկու օրհնութեանց չափով, (եւ ԺԳ. դարէն զատուած անոնցմէ, որոնց յետոյ լքումն ալ տեսանք), ազատութիւն գտած են բազմաշաբաթ ըստ քիմս, ինչպէս կը թուի՝ Սիւնեաց կողմերն ու տեղական սովորութեամբ (որով անծանօթ մնացած Ապարանեցւոյն), եւ զոր կարելի է հետեւցնել եւ Տաթեւացւոյն վկայութենէն թէ «տասն է օրհնութիւնն կիրակէին, նոյնպէս եւ օրհնութիւն մարտիրոսացն» (Հոր. Ամբ. 335): Վերջինները չափուած առաջիններուն վրայ: Իր ժամանակի քաղուած-

ժոյ բովանդակութեան դադար մ'ալ կու տայ մեղի՝ հարցմանս ներքեւ. «Չաւականն ո՞րպէս քաղեմք». եւ պատասխանելով՝ թէ կիրակէ օր «խաչի շաբաթան ասեմք... այլ եւ հանգստեան ասեմք», ուրիշ օրերու մասին կը գրէ. «Նախ ասել Աւետեաց, եւ ապա Ծննդեան եւ Գալստեան եւ Պաշի եւ Յարութեան եւ Համբարձման եւ Հոգւոյ դալստեան եւ Վարդապառի եւ Փոխման: Թէ տէրունի եթէ տօն, այսպէս է կարգն: Իսկ թէ Սրբոց, նախ Մարգարէից, եւ ապա Առաքելոց եւ Հայրապետաց եւ Մարտիրոսաց: Իսկ Մեծացուցէք եւ Պաշի եւ Հանգստեան հանապազորդի են» (Հրցմ. 642): Հոս արդէն կայ յիշատակի անհեղեղ զանգուած մը, բայց տեղական հանգամանքով՝ ինչպէս ըսինք: Եւ ինքն իսկ կը վկայէ, հակառակ սովորութեան, որ կը յարատեւէր եւ յետ իրեն հասարակաց ըով, ըսելով՝ թէ «յամենայն տօնս կրկին օրհնութիւն է» (Մեկն. Սղմ. 517), թէ եւ «օրհնութիւն» կրնայ նշանակել մարգարէականն ալ:

Քաղուածներու ընդհանրացումն սկսաւ Ժ2. դարուն: 1540ին Սեբաստիա գրուած տօնացոյց մը (Թ. 814 Ի Ս. Ղազար) միանգամայն երգել կու տայ Նոր Կիրակէին՝ «Նորագեալ կղզիքն եւ Յաղթական Բեգ արքիմուքիւն», իսկ Տէր յերկինցներն (ուրեմն բոլորն ալ) հետեւակ քաղեալ, եւ թէ չգիտես, Յաղթականն ասա»:

Այս վերջինը Վերափոխման տօնին եւս «հետեւակ» կը դնէ «Այսօր գանձառելի, Այսօր հրաշափառ եւ զամենայն շաբաթանքն»:

Որ բնաւ չափ չունի:

Ղուկաս Թղեցին՝ նոյն Ժ2. դարուն՝ իր իրաւունքուն մէջ ճշտած է բոլոր օրհնութեանց հետեւակները: Աստուածածնի շաբաթաններէն՝ Երգեցեք որդիք Սիմոն ունի հոն աւելի 13 շաբաթան, եւ Աւագ օրհնութեանց վերջին տունները. Որ նախմաց՝ 12. Խորհուրդն անմատ՝ 10. Ուրախացիր սրբուհի՝ 15, եւ այլն, այդպէս անհաւասար թուով (գրչ. 1315, 279):

Կայ նաեւ քաղուածն «ուրեմն երա-

ժըշտէ բարունեացն», որ անբաւական զտեր է Աւագ օրհնութեանց 10 շաբա-
կանները, եւ բարդեր է նաեւ անոնց վը-
րայ. որով ԱԶ Երգեցուի երգ նորն ունի
աւելի 35 շաբաւան. ԱԿ Երգեցեմ տեառն՝
16. ԲԶ Օրհնեցուի գտէր՝ 25. ԴԿ Յաղ-
թական քեզ՝ 51, եւ այլն: Չստ է Ոսկանի
քաղաւածացանկն ալ ձայներու մէջ ան-
հաւասար չափով (Ժմբ. տպ. 1677ին,
395): Տարբեր ըստ թուին եւ ի տպ. 1642
տարւոյն:

Գր. Տաթևացին կը վկայէր՝ թէ իր
օրով «ի պահու ոչ է օրհնութիւն» (Հտր.
ամբ. 335), ինչպէս չկայ եւ Օշինի ժա-
մագրքին մէջ: Ստղայն այդ օրերուն ալ
կը հաստատուն քաղուածներ այս շրջ-
նանիս: «Սրտ. ժմբ. կարգաւորութեան»
կը գրէ. «Բայց պահոց օրհնութիւն ոչ
գոյ եւ ոչ ասի եւ ոչ է կարդեալ, այլ որք
ասեն զապաշխարութեան՝ ոչ է խոտան»
(Յաւել. ԺԱ.): Եւ յիշելով երաժշտի խը-
րատն ունի նաեւ «Քաղուածք ապաշխա-
րութեան». ԱԶ եւ ԱԿ 17 շաբաւանով.
ԲԶ՝ 23, ԲԿ՝ 21. ԳԶ՝ 33 եւն. (437): Այս-
պէս նաեւ միւս տօներուն. զոր օրինակ,
Յայտնութեան ճրագալոյցին օրհնութեան
կու տայ եօթը աւելի շաբաւան. «Եւ ապա
ԲԶ Մեծացուցէքն կատարեալ ասա. եւ
այլ խորհրդաւոր շաբաւանքն ասա. թէ ի
Ծննդեան ուղեւ եւ թէ աւագ օրհնու-
թեան, մի մի շաբաւան կայ, եւ յետի
տներն ամէն Աստուածածնի է, որչափ որ
կամիս՝ զխորհրդաւորքն ասա»: «Որչափ
որ կամիս» կը ցուցնէ քաղուածներու
անշափութիւնը, բայց եւ ազատութիւնը՝
սահմանելու անոնց քանակը: Եւ կը յա-
րէ. «Եւ ապա Հոգւոյ Գալստեան, Հան-
դրատեան, Սաղի (շաբաւանք), եւ տան
Փառք, եւ ասեն զօրհնութեան յետի
տունն՝ Գեղմն իմանալի» ինչպէս կ'ընենք
ցարդ, յետ ամէն օրհնութեան: Ունի
նաեւ առանձին «Կարգ Հոգւոյ Գալստե-
ան, Հանդատեան եւ Սաղի յամենայն
աւուր ասի» օրհնութեան քաղուածնե-
րուն վերջը (464), եւ անոր կից նաեւ
«Կարգ Մեծացուցէից ըստ աւուրց շա-

բաթուց (483), որոնց չորս տեսակներն
ալ սովորական են այժմ քաղուածներու
վերջը. երեքը ծանօթ Տաթևացիին օրե-
րէն՝ ինչպէս տեսանք:

Շաբաւանները ըստ հաճոյս քաղելու
ազատութիւնը կը զգացնէ եւ «Սրտ.
ժմաղ. կարգաւորութեան», զրելով թէ
աշակերտի դասն «սկսնու զօրհնութիւն
շաբաւանին զպատշաճ ասել», (Յաւել.
ԺԱ.), որմէ կ'իմացուի թէ ոչ պատշաճն
ալ կար: Առաքել Դաւրիթեցի կ'աւանդէր
թէ ժի. դարու սկիզբը Սիւնեաց Մեծ Ա-
նապատին մէջ եւս կ'երգէին «օրհնութիւն
ըստ խորհրդոյ աւուրն, եւ ի վերայ քաղ-
ուածք շաբաւանաց» (196):

Սակայն անհանդուրժելի անկարգու-
թիւն էր քաղուածներու այդ դրութիւնը,
զոր զգաց Մովսէս Դ. (1630-33), եւ վե-
րածել տուաւ զանոնք տասնի, օրհնու-
թեան շաբաւանով հանդերձ, ինչպէս կը
վկայէ անանուն վերածիչն իսկ, զրելով.
«Սիրելի եղբայր, ոչ թէ զայս իմով ան-
ձամբ արարի... այլ մեծ կաթողիկոսն
Մովսէս իւր խորին իմաստութեամբն
քննեալ, եւ վկայ առեալ զմեծ հաւատա-
րիմ վկայն զսուրբ զՍտեփանոս, որ զա-
ւագ օրհնութեան տասն շաբաւան ասաց.
ասելով ո՛չ աւելի եւ ոչ պակաս»: Եւ կը
յարէ. «Թէ ընդունիս՝ բարի է, եւ թէ ոչ՝
եղիցին կամք քո»: Չետեղուած է 1663ի
ժամագրքին վերջը (էջ 520): Իւրաքան-
չիւր քաղուածի ետեւ շաբաւաններն են՝
Հոգ. Հանգ. Աստուածածնի եւ Սաղի,
ըստ վերինին. իսկ ատոնցմէ մէկը կամ
միւսը պակաս է՝ երբ օրուան յիշատակին
քաղուածին մէջ կայ, կամ երբ Սաղի չի
միաբանիր տօնին հետ: Մեծ մասով այդ
ցուցակը նման է՝ բայց ոչ հաւասար՝ ա-
նոր հետ, որ կարգուած է շաբաւաննե-
րու վերջն ու կը գործածուի այսօր: Ու-
կան ալ կամ չտեսաւ եւ կամ չուղեց հե-
տեւի անոր:

Բայց քաղուածի ոճն ինքնին անտեղի
է, որովհետեւ հակառակ է նախկին կար-
գաւոր ձեւին. աւելորդ տեղ կը ծանրա-
բեռնէ պաշտամունքը, անիմաստաբար

իրարու հետ կը խառնէ ու կը խառնակէ
տարւոյն զանազան յիշատակները, որոնք
իրենց օրերուն միայն կը կիրարկուէին,
մինչ միւս կողմէ միեւնոյն շաբաւանները
հանապազօրդ կրկնութեամբ անհրապօր
ու տաղտկալի կը դառնան, ուր հաճու-
թեամբ կը նուազուին անոնք իրենց յա-
տուկ օրերուն:

Նոյնքան անհանդուրժելի է յարութեան
համարձիններու քաղուածն ալ: Մէկ խօս-
քով՝ ծնունդ է վերջին շրջանին, որ մոռ-
ցաւ հին աւանդութիւնները ու վայելչու-
թեան սահմանները հոգեւոր պաշտա-
մունքին մէջ, եւ զոր շատ պատշաճ է
սրբապրել եւ դառնալ նախկին դրու-
թեան:

3. Առաւօտեան. — Սրտաներուն մէջ
երեք մանկանց երգին Փառք հօրը բաժ-
նուած է. առաջին մասը յատուկ է փոխն
սկսողին. Այժմ եւ միշտը՝ միւս կողմին,
եւ Ամէն առաջինին: Նոյնպէս է միւս
փոխերուն վերջը:

Շաբաւանները կը շարունակեն խառ-
նուել սաղմոսներու տուններուն հետ՝ ինչ-
պէս առաջ, օրհնութեանէն զատ, որ խղած
է իր կապը շաբաւաններու հետ, անոնց
բազմացումով:

Յօդեա տէր մաղթանքին մէջ սուրբե-
րու տօներուն կը փոփոխէին «ընդ երա-
նելի սուրբ վիպսն, կամ ընդ երանելի
առաքեալսն, կամ ընդ երանելի նախա-
պետսն, կամ երանելի սիրոց կուսանացն,
կամ ընդ երանելի հարցն օրհնել զքեզ»
եւն.: Իսկ պահոց օրերուն՝ լոկ «ընդ ե-
րիս մանկունսն օրհնել զքեզ». զանազա-
նութիւններ՝ որ չկան Մեծփեցիին քով:
1598ի ժամագրքը ընդունած չէ Մեծփե-
ցիին բաժանումը Յօդեա տէր մաղ-
թանքին, այլ մարտիրոսներու համար
ունի սովորական ձեւը. իսկ «չորեքշաբա-
թի եւ ուրբաթի՝ Աստուած քաւա զմե-
զաւորս եւ կեցո. Գ կրկնեա զԱստուածդ
քաւեալս»: 1634ին ամբողջ կը դնէ պահո-
ցը, եւ մարտիրոսաց վերջին մասը միայն
«քեզ գոհութիւն եւ փառս մատուցա-
նել...»: 1663ին ընդհանրապէս բաժնած

է իրարմէ, երկրորդն համառօտելով եւ
յղելով նախորդին «գրած է»:

Կիրակի օր Մեծացուցէի շաբաւանին
վերջին տան կը փակցնէ — եւ ինք
միայն — Տէր ողորմեա, կեցո տէր, որու
նմանութեան հանգիպեցանք եւ կանխաւ.
Եւ յետոյ Վասն սուրբ տեղւոյս երգը, որ
հոս իր առջեւ ունի նաեւ եւ եւս խաղա-
ղութեան գտէր աղաչեցուի, որ առաջ
չկար. եւ ոչ իսկ Մեծփեցիին ժամագրք-
քին մէջ, եւ չունին դեռ 1599ին, 1663ին,
1655ին, եւ չորս տաղերները:

«Բարձր ասի Տէր յերկնիցն քան զՀա-
քըն»: 1599ի ժամագրքը յետ Սուրբ Աս-
տուածի «Փառաւորեալ»ին ունի «Փըր-
կել զմեզ ի փորձութեանէ եւ յամենայն
վտանգից մերոց», որուն գոյութիւնն ան-
հաստատ էր նախապէս, եւ չկայ 1634ի եւ
1663ի մէջ, ուր 1655ին եւ չորս տաղա-
գիրներն ունին:

«Վասն խաչի քո պատուականի» մաղ-
թանքը Սրտաներուն մէջ ունի հոս յաւել-
ուած իր սկիզբը «Քրիստոս Աստուած»
բառերը, որ կը պահպան 1598ի, 1599ի
ժամագրքերուն մէջ. եւ 1634ին, 1663ին,
եւ 1655ին ունին. նոյնպէս ունին տաղա-
գիրները սկսեալ 1662ի օրինակէն, եւ ա-
սիկա ջնջելով առաջին տան վերջին տէրը,
զոր ուրիշներ կը պահեն:

Աւագ շաբթու օրերէն ջնջուած է այժմ
Տէր ամենակալը, որով Սրտեւս անյիշա-
տակ թողուած է:

4. Արեւագալ — Արեւագալի երգե-
րը, Յարեւելից մինչ ի մուտս եւն. դադ-
րած են հոս հանապազօրեայ ըլլալէ:
«Բաց ի շաբաւանացն, կ'ըսէ, որ ի յա-
ղուիացսն ասի, ամենայն խրատ կարգա-
ւորութեան արեւագալին նոյն է ի բոլոր
ամին»:

5. Ճաշու. — Երրորդ ժամուն լոկ կը
նշանակէ Օրհնեմք զքեզը, ուր անոնց շա-
բունակութիւնը՝ հաւարեցաւ ու Չարչա-
րակցեալ կը դնէ «ի աղուհացսն». ապա-
ցոյց՝ թէ առաջինն իսկապէս հանապա-
զօրեայ դարձած է հոս՝ հակառակ նախ-
կին ոճին, եւ «ի միասին ասի յատենին»

ինչպես կանխառն: Յամենայն ժամու յա-
ջորդող եւ եւս խաղաղութեան եւ Օրին.
եւ փառքին միջեւ կը դնէ Օրինեա տէր,
ծանօթ երբեմն: Տէր Աստուած օրինեալ
երկտուն սաղմոսին ժամանակն երբեմն
անորոշ թողուած, այժմ աղուհացից մէջ
է նշանակուած, եւ իրեն ետեւ վերստին
կրկնուած եւ եւս խաղաղութեան, Արի-
նեա տէր (իրբեւ յատուկ). եւ Արինու-
թիւն եւ փառք: Յետ Տէր հովուեցէ սաղ-
մոսին կը նշանակէ եւ աղատութեան կը
թողու՝ «թէ չարական կամիս ասել, ի
ձայնէն ասա Հոգւոյ զալստեան եւ Մեծա-
ցուցէից ըստ պատշաճի»: Օչինի եւ
Վարդանի քով մեր տեսածն է: Վերջին
եւ եւս, Արինեա եւ Արինութիւն կայ
նաեւ վեցերորդ եւ իններորդ ժամերուն
միեւնոյն տեղւոյն մէջ, իսկ չարականներ
չկան:

6. Սեղանօրինէքի կանոնին մէջ երեք
անգամ ունի Օրինեա տէր այս անուն.
երկուքն օրհնութեան ու գոհութեան ըս-
կիւրը, տալով մեծագոյնին, եւ միւսը
Փառք քեզ տէր աղօթքին առջեւ, զոր կու-
տան «Ծերոցն. եւ թէ հաւասարք են,
փոքր իրիցուն է աղօթքն»: Ապա կը յարէ.
«Եւ ելեալ ի սեղանոյն դան ի դուռն ե-
կեղեցւոյն, եւ երեք ծունր եղեալ (զըր-
ուած է եղեալ) ասեն. Փառք քեզ տէր.
գոհանամ զքեզ պարգեւատու բարեաց եւ
տուող ողորմութեան քրիստոս Աստուած,
ընդ Հաւր եւ սուրբ Հոգւոյդ»: Այս ամէ-

նը չկան զրչաղիր եւ տպաղիր ժամագրը-
քերուն մէջ:

7. Երեկոյին՝ յետ Փառք քեզ Աստ-
ուածին «Արինիս տուր» կ'ըսէ աւագե-
րէցին... «Եւ նա ասէ՝ Արինութիւն եւ
փառք»: Կը դնէ Արինեա նաեւ Հասեալփս
ի ժամ մաղթանքէն եւ Յոյս կեանքէն ա-
ռաջ, երեքն ալ անծանօթ ուրիշներու:
Միայն 1599ինը ունի զայն յետ Հասեալփս
մաղթանքին: Աղուհացից զիրքն եւ ստո-
ղողին իրազեկանէն հանուած ու փո-
խադրած է հոս՝ յետ Լուր ձայնից աղօթ-
քին, ինչ որ այս իրատեսերուն յատուկ է:

8. Խաղաղականին մէջ իրատեսերը եւ
1598ինը չունին առաջարանի Օրինեցիցը:
Խրատքը կը պահէ ի նեղութեան կանոնը,
բայց միշտ «յաղուհացսն»: Իսկ Նայեաց
սիրովն յարած կը պահէ Շնորհեա մեզ
երգին՝ հակառակ Մեծօրհնի փոփո-
խութեան: Նոյնպէս է նաեւ 1598ինը, եւ
ըստ իրատեսին «ի միասին ասի յատեան»:
Բայց ջնջուած է Հանգստեան պաշտօնէն՝
ուր կար երբեմն: Խրատքը այս վերջին
ժամուն Աղաչեցումք քարոզէն յետոյ կը
դնէ Օրինեա տէր, զոր այսպէս ինք մի-
այն ունի: Իսկ յետ Հայր մերի կը յարէ
թէ «ասի՝ Անկանիւմք առաջի քո, սուրբ
Աստուածածին, եւ աղաչեմք զանաբաւ»
ինչ որ նորութիւն է:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ԴԱՐՁԵԱԼ ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻԻ ՄԱՍԻՆ

Իսրայէլ Օրիի մասին պատմաքննական
հատորիս լոյս տեսնելէն (Ս. Ղազար,
1960) ի վեր հրատարակուեցան քանի մը
զրքեր ու յօդուածներ, որոնց մէջ Օրիի
մասին եղան զիտողութիւններ եւ նոյն-
իսկ հրատարակուեցան նոր նիւթեր: Իբր
Օրիի մասին գործիս շարունակութիւն՝
կ'արժէ որ այդ նորութիւնները հոս ներ-
կայացուին:

Ա. — ՄԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Այս խորագրով մանր գրութիւն մը կը
գտնենք Երեւանի Պատմա-Բանասիրական
հանդէսին մէջ (1960, թիւ 1, էջ 265):
Գրութիւնը ստորագրած է Վ. Դիւրյեան
եւ արդարեւ շահեկան է: Գրութեան հետ
հրատարակուած է նաեւ նկար մը, պատ-
րաստուած Իտալացի նկարիչ Ճիովաննի
Անթոնիոյ Փելլեկրինիյէ, զոր Դիւրյեան
հրատարակուած գտեր է Անգլիական A-
pollo ամսագրին մէջ: Նկարը կը գտնուի
«Շլաիօհայմում (Միւնիխ): Նկարին խո-
րագիրը «Հայաստանի դեսպանները առ
Էլէքզոր Փօհան Վիլհելմ վոն տեր Փֆալ-
ցի»:

Դիւրյեան յաջող եղբակացութեամբ մը
նկարները պատրաստուած կը նկատէ Մի-
նաս վարդապետի եւ Իսրայէլ Օրիի առ
Էլէքզոր կատարած դիմումին ի յիշա-
տակ:

Փֆալցի Էլէքզորը իրապէս կարեւորու-
թիւն ցանկացող եւ փառաբանուել սիրող
մէկն էր, եւ բնաւ զարմանալու չէ որ ի
փառս իր սնապարծութեան՝ ապսպրած
ըլլայ այս նկարը, հաւանաբար ի շարս
ուրիշ նման նկարներու, որոնք իր պա-
տուր զարդարած ըլլալու են:

Նկարիչ Փելլեկրինի միայն 1713-1714
թուականներուն զօած կրնար ըլլալ այս
նկարները, երբ արդէն Իսրայէլ Օրի մե-

ռած էր: Օրիի մահը, ինչպէս գիտենք,
տեղի ունեցաւ 8 Օգոստոս 1711ին, Աս-
տրախանի մէջ: Օրին վերջին անգամ
Փֆալցի իշխանին մօտ էր 1705ին: Անկէ
վերջ Օրին Դիւսելդորֆ չէ գտնուած:

Ուրեմն, պարզ է որ նկարիչ Փելլեկրի-
նի Օրին անձամբ չէ տեսած: Ոչ ալ տե-
սած էր Մինաս վարդապետը, որ 1700ին,
կամ քիչ առաջ, անգամ մը կրնայ Դիւ-
սելդորֆ գտնուած ըլլալ: Պարզ է որ Օ-
րիի եւ Մինաս վարդապետի այս պատ-
կերացումը երեւակայական եւ չինծու
միայն կրնայ ըլլալ:

Նկարին մէջ կարեւորագոյն տեղը տըր-
ուած է մօրուսաւոր մէկու մը, որ կրնայ
Մինաս վարդապետը ներկայացնել: Սա-
կայն այս մօրուսաւորին տարագը երեք
վարդապետական սքեմ չէ: Վարդապետ
նկատուածին ետեւ կիսաճաղատ, կախ
պէխերով գլուխի մը մէկ մասը, ինչպէս
նաեւ ձախ ուսը կ'երեւի: Ասիկա իբր թէ
Օրին պիտի ըլլայ: Որքան որ գիտենք, ա-
ռաջին շարքին վրայ գործողն էր, եւ ան
երեքը իր տեղը չի զիջանիր ունէ ուրիշ
մէկուն, թող թէ Մինաս վարդապետին:

Մեր քննական աշխատութեան մէջ ցոյց
տուինք որ Փֆալցի Էլէքզորը, եւ Օրին
արդէն 1706ին դադարած էին իրարու հետ
յարաբերելէ: Որքան ալ իր փառասիրու-
թիւնը փայփայելու համար Էլէքզորը
ցանկար Հայաստանի Դեսպաններուն խո-
նարհաբար իրեն գալը պատկերացնել տալ
եւ իր պալատին մէջ ցուցադրել, շատ
ճիշդ պիտի չթափէր որ նկարը հարազա-
տօրէն ներկայացնէր Մինաս վարդապե-
տը եւ Իսրայէլ Օրին: Այդ իսկ է պատ-
ճառը որ նկարին խորագիրը լոկ բաւա-
կանացեր է Հայաստանի Դեսպանները յի-
շելով, քան թէ տալով անունները այդ
«դեսպաններուն» (°):